Հավելված
Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի
2015 թվականի հունիսի 17-ի թիվ 279-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքային համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ քաղաքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

1. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-4):

Առաջին կարգի մասնագետը՝

ա) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

բ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

գ) Իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը և ապահովում է փաստաթղթաշրջանառության աշխատանքները:

դ) Կատարում է բաժնի պետի հանձնարարականները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Առնվազն միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2015 թվականի հուլիսի 27-ին ժամը 10^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

Նշված թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս)
- կրթության մասին փաստաթղթի (դիպլոմ) պատճենը բնօրինակի հետ
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- զինգրքույկի պատճենը բնօրինակի հետ (արական անձինք)
- մեկ լուսանկար 3x4 չափի
- անձնագրի պատճենը բնօրինակի հետ:

Մրցույթի հարցաշարը փակցված է քաղաքապետարանում: Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր ժամը 9^{00}-ից մինչև ժամը 18^{00}, հետևյալ հասցեներով՝ Արմավիրի քաղաքապետարան՝ ք. Արմավիր, Հանրապետության փ. 32 (հեռ.՝ 0237-2-38-69) կամ Արմավիրի մարզպետարան՝ ք. Արմավիր, Աբովյան փ. 71 (հեռ.՝ 0237-2-07-70):

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015 թվականի հուլիսի 17-ը:

Արմավիրի քաղաքապետ՝ Ռ. Խլղաթյան